

## ԺԱՄԱՆԱԿԱՆԳՐՈՒԹԻՒՆ Ա. ԳՐՈՅ

## ԸՍՏ ՀԱՅԿԱՑ ՇՐՋԱՆԻՆ

ԳԼ. Թ.

(Եար. Տես էջ 109)

Սույր Գրոց ժամանակագրութիւնը Հայկայ շրջանին հետ համաձայնեցնելու ուստամասիրութիւնին աւարտելու համար, տակաւին երեք զանազան շրջաններ դիմացնիք պիտի ելլեն՝ յառաջ քան հասնիլն Քրիստոնէական թուականին:

Եւ այս շրջանները պիտի կազմեն հետևեալ զուգներն, առաջին, Խրայելացւոց Եզիպտոսէն ելլելէն մինչև Սողոմոն իմաստոյն տաճարին շինութիւնը սկսիլը. Երկրորդ՝ Սողոմոնի տաճարին շինութիւնը սկսելէն մինչև կիւրոս Պարսից թագաւորին զահ բարձրանալու տարին. և երրորդ՝ կիւրոսի Պարսից թագաւորին զահ բարձրանալէն մինչև Քրիստոնէական թուականը:

Բայց այս ժամանակագրութիւնը ճշտելու ժամանակ՝ չենք կրնար անտես ընել օտար ազգաց ժամանակագրութիւններն՝ որոնց, կարծես, մեր այս գծած սահմանէն գուրս շրջիլ կ'ախորդին, և սակայն այս սահմանին մէջ, այն է Հայկայ շրջանին մէջ, զանոնց ալ պէտք է սահմանափակել: Այս ժամանակագրութեան շրջանին մէջ մտնել չուզող ազգերն են Բարելացիք, Ասորեստանեայք, Ճենացիք, Եզիպտացիք, Հնովիք, Խումեն ու գուման՝ որոնց իրենց թիւրաւոր տարիներով կարծես կ'արհամարհէն մեր մի քանի տասնեակ զարերն:

Պղատոնի գրքին մէջ խօսող Եզիպտացին կ'արհամարհէ զեյոյնը. «Ով Սոյոն, ասէ Եթոյն միշտ մանկուի էք, քանզի ծեր Յոյն այր երբեք ոչ գտանի, և չիք առ ի ձէնջ ուսանել ուսումն զէին ժամանակին. իսկ Եզիպտացւոց բազում ինչ առանձին ճառը պատմին, նոյնպէս և Քաղդէացւոց, զի նորա քառասուն և ևս

աւելի թիւր ամաց համարին ճգեալ իւրեանց ժամանական»:

Եւսերի Քրոնիկոնի մէջ իսկ կը կարդանք այս վկայութիւնը, և այն պատճառաւ յառաջ կը բերէ այս վկայութիւնն որպէս զի ցոյց տայ թէ այս վերոյիշեալ ազգերն իրենց ծագումը թիւրաւոր տարիներ առաջ եղած կը համարին, և ինըն իսկ Եւսերիու ընդունած կը թուիր այս կարծիքը, վասն զի Բարելացւոց ծագմամբ կը սկսի իւր ժամանակագրութիւնը առանց առնչութեան մէջ զնելու ծանօթ ժամանակագրութեանց միոյն հետ, մինչ խորենացին «Բաղազու արմատոյն հանուրց մարդկութեան» վրայ գրած զիսոյն մէջ Արիւղենոսին խօսը մէջ տեղ բերած ժամանակ՝ կ'ըսէ. «Այսպէս և զնա ամենախնամն Աստուած եցոյց հովիւ, և առաջնորդ ժողովրդեան», կը համարի Խորենացին թէ այդ ամենախնամն Աստուածոյ ցուցուցած հովիւն և առաջնորդէն վերջը թագաւորած ըլլայ Բարելացւոց Աղորոս թագաւորը, վասն զի կը կարգանց նոյն Խորենացւոյն մէջ «յետ որոյ՝ և ասէ, թագաւորեաց Աղորոս շարս տասն»:

Ուրեմն ո՞վ էր այս Աղորոսն, Ո՞ր ժամանակի կը պատկանէր, միայն այս յայտնի է ըստ Արիւղենոսի և Խորենացւոյ թէ նախամարդն չէր, այլ առաջին մարդէն վերջը թագաւորած է, և որովհետեւ Բարելացւոց թագաւորներու զահակալութեան ժամանակամիջոցն ՍիԳ թիւր ըսուած տարիներու մէջ կը պարփակուի, ուրեմն Գորդեան հանգույցի լուծումն կը կայանայ այդ ՍիԳ թիւր տարիներու լուծմանը մէջ, և որովհետեւ Քիստութրոս նաւապետն՝ վերջին թագաւորն, կը համապատասխանէ Ա. Գրոց Նոյ Նահապետին, ըսել է թէ տասն շարք Բարելացւոց թագաւորներու ճիշտ նախաջրենեղեղեան տասն նահապետաց կը համապատասխանեն, որով ՍիԳ թիւր տարիներն Բարելացւոց՝ նախաջրեղեղեան 2262 տարիներու շրջանին կը համապատասխանեն. և կամ աւելի ճիշտ 2229 քաղաքական տարիներու:

Ուրդ մենք այս խնդիրը լուծելու ջանանք:

Կարդի<sup>ի</sup> է սյս խնդրոյն լրտումն ընել

Դժուարին խնդրոյ մը ձեռք կը զարնենք, և քանի որ այսքան ժամանակագիրներն և ոչ մին կրցեր է որոշ բան մ'ըսել, ինձի՞ ուրեմն կը մնայ, պիտի բացանչեմ ըստ Բոսութեսի, այս խնդրոյն լուծումը տալու դժուարին գործը, մինչ Եւսերիոս իսկ շուարած Կ'ըսէ իւր Քրոնիկնին մէջ. «Եւ արդ զի՞նչ հարկ իցէ ինձ որ քան զամենայն ինչ զգշմարտութիւն պատուեմ, զայսպիսի իրս մանր կրկտել»։ Նա որ զանազան ազգաց ժամանակագրութիւնները ջանացեր էր մէկ որոշ թուականի վերածել, - և որովհետև Քաղղէացւոց և Ասորեստանեայց ժամանակագրութիւնները չէր կրցեր ծանօթ ժամանակի շարքին մէջ մոցնել, քանի որ անոնց թուականները ծանօթ մարգութեան ծագումէն հազարաւոր զարեր առաջ իրենց թագաւորներու շարքեր կը ներկայացնէին, - խորհուրդ կու տայ մեղի Եւսերիոս ինցն նոյն Քրոնիկոնի մէջ. «Եւ թոյլ և պատուէր տամ ամենայն ումեր ի սկզբան մի՛ երրեց ոգորել յանդնել, որպէս թէ ստոյք ինչ հասու ժամանակացն կարիցէ որ լինել»։

Եթէ Եւսերիոս որ այնքան մանր պրագտած էր ամէն ազգաց՝ և իւր ժամանակին ծանօթ ազգաց ժամանակագրութիւնները, և չէր կրցեր որոշ շնչանի մը տակ մոցնել զանոնք, և իրմէ վերջը այնքան ուրիշ նշանաւոր ժամանակագրիներ նոյն պէս չկրցան որոշ արդինք մը յառաջ բերել, ես որ այս ամէն զիսեմ և կը ձեռնարկեմ համաձայնինցնելու Քաղղէացւոց և Ասորեստանեայց թիւրաւոր տարբեները մեր ժամանակագրութեան հետ, միթէ յանդնութիւն պիտի չհամարուի իմ այս ձեռնարկս։ Եիրավ յանդնութիւն կ'ըլլար եթէ նոյն իսկ Եւսերիոս՝ առանց իրեն ուզելուն, ինձի ճամարայ մը ցոյց տուած շըլլար։

Եւսերիոսի ցոյց տուած ճամրուն մէջ չմտած, նախ հարցնեմ, որո՞նք են որ զրեցին թարելացւոց, Ասորեստանեայց և Եղիպատացւոց պատմութիւններն ։ Արդեօք

այս պատմաբաններն Մովկէս մարգարէէն առաջ, ժամանակակի՞ց, թէ յետ Մովկէսի եղած են։

Քաղղէացւոց պատմաբաններն յետ Մովկէսի են

Նախ ցոյց աանց թէ Քաղղէացւոց պատմաբաններն, նոյնպէս Եղիպատացւոցը, ամէնքն ալ Մովկէս մարգարէէն վերջ եղած են, ապա մատնանիշ ընենց թէ իւրացանց չիւր զգեր զանազան տարբիներ կը զործածէին, որով տարի ըսելով ինչ կը հասկընայն, ի վերջոյ Քաղղէացւոց թիւրաւոր տարբիներն քանի՞ արեգակնային տարբիներու կը համապատասխանեն։

Քաղղէացւոց պատմաբաններու վրայ կամ անոնց գրուածոց վրայ ծանօթութիւն տուած է Պղատոն, բայց մեր ձեռքը հասած է Եւսերիոսին, վասն զի ասոր ժամանակ, ինչպէս նաև մեր Խորենացւոյն ժամանակ, Աղեքսանդրեան գրատունն կանգուն էր, ուր ամէն ազգաց պատմութիւն, գիտութիւն, կը գտնուէր, ծանօթ է այն մեծ գրատան այրման արկածը և աշխարհի կրոյս մեծ զան մը. արդ ինչ որ զանազան պատմիչը անկից քաղած են, միայն այն հատակորներն ձեռքերնիս հասած են։ Բւտի Եւսերիոս Քաղղէացւոց պատմութեան իրը վերնազիր դրած է «Որպէս Քաղղէայց ժամանակագրեն ի Բագմակի Աղեքսանդրեայ. և վասն զրոց Քաղղէացւոց և վասն առաջին թագաւորաց նոցա»։ Եւսերիոսի այս հատուածին մէջ աչքի զարնող բան որ կայ՝ և ստորագծած բազմավէա Աղեքսանդրն, մ'կ է այս մարդն կամ մատնազիրն. ինչ ազգի և ո՞ր ժամանակի կը պատկանի։

Այս Աղեքսանդր Բազմավէան (Alexandre Polyhistor) ծանօթ յոյն մատնազիր մ'է, Խորենացին ևս կը յիշատակի, թերևս Մելիտինացի. և կուռնելիոս Լինտուլոսի գերին եղած է, զոր ապա ազատ արձեկեց և Աղեքսանդր մեռաւ Լաւրենտիոսի մէջ երր իւր տունը այրեցաւ 75 (Ն. Բ.) թուականին։

Խորէն ծայրագոյն վարդապետ Ստեղիանէ, խորենացւոյն թարգմանութեան 15որդ ժանօթութեանը մէջ (էջ 15), խօսելով Բազմավէպի վրայ կը զրէ. «Ծնվել է Մշելտում Աղ դարի երկրորդ հէսում Ք. Մ. յետոյ նա ապրում էր Հոմում»։

Հու Աղ դարի երկրորդ կիսում Քրիստոսի ծենելից մեր 75 թուոյն կը համապատասխանէ. բայց մենք նախ քան ըզդիստոնէական թուականն նշանակած ենք այսինքն Ն. Ք. մինչ Ստեփանէ Քրիստոսի ծննդեան թուականն զրած է, և որովհետև կանխաւ խօսած չէ թէ Աղեքըսանդր նախ քան զՔրիստոս կ'ապրէր, լաւագոյն կ'ըլլար եթէ Ք. Մ. զիրերուն առջևը Ն. զիրն ալ զրած ըլլար, որով աւելի որոշ կ'ըլլար, վասն զի Քրիստոսի ծենելից թուականներուն մէջ առաջ ալ վերցն ալ նոյն անուամբ դարեր և թուականներ կան և կը զտնուին, այս տարրերութեամբ որ ոմանք նախ քան զՔրիստոնէական թուական և միւսներն յետ Քրիստոնէական թուականներ կամ դարեր կը նշանակին. ուստի սահմանն որոշ զընելու էր: Բաց աստի ուրիշ տարրերուն թիւն մ'ալ կայ Ստեփանէի և իմ նշանակած թուականաց մէջ. ես 75ին Ն. Ք. «մեռած» զրած եմ, նա՝ «ծնվել է» զրած է: Աղը եթէ ստոյդ է ըստ արդի ժամանակագրաց, թէ Աղեքըսանդր Բազմավէպն կուռնելիոս լինտուլուի գերին եղած է, կը հարցնենց եթէ Աղեքըսանդր 75ին Ն. Ք. ծնած ըլլայ՝ քանի տարուան եղած ժամանակ գերի եղած է և ե՞րբ արձակուած: Վասն զի կուռնելիոս լինտուլուի մահուան գամմանակն յայտնի է, այն է 63ին Ն. Ք. որով եթէ Աղեքըսանդր 75ին ծնած ըլլար ըստ Ստեփանէի, առ առաւելն 63 թուականչն առաջ արձրկուած պէտք էր ըլլար, որով իր ազատութիւնը գտած ժամանակը 12 տարուան կ'ըլլար: Սակայն այս գէպը մեզի համար մեծ կարևորութիւն մը չունի, երբ մտածենց թէ կուռնելիոս լինտուլոս 75ին Պրետոր եղած է, արդ գերի առնուլ նոր ծնած տղայ մը իրեն ինչ քանի օգտակար կը ըլլայ:

Նար ըլլալ, պիտի ըստու թէ ծնողացը հետ գերի եղած է, և ինչո՞ւ ծնողացը անունը չյիշատակուիր և նոր ծնած տղուն կը յիշատակուի. միթէ կ. լինտուլոս զիտէ՛ր թէ ապագային մեծ պատմաբան պիտի ըլլայ: Հոռվմայեցից գերի կ'առնուին որպէս զի իրենց գործերուն ծառայեցնեն, երկիրներուն, տան ծառայութեանց կամ անձնական ծառայութեանց, ուստի աւելորդ չէ՛ր ըլլար նոր ծնած տղայ մը զնել: Աղը նկատի առնելով այս ամէն պատճառարանութիւնները, և արդի պատմաբաններու 75 թուականին Ն. Ք. մեռած նշանակած ըլլալին, մենք ալ հաւանական դատեցինք թէ 75ին Ն. Ք. Աղեքըսանդր Բազմավէպի մահը պատահած ըլլայ Լաւրենտիումի մէջ, և ոչ Հոռվմայ մէջ, ինչպէս Ստեփանէ նշանակած էր: Ինչոր ալ ըլլայ՝ մեր ֆնտուածը մի քանի տարիներու ինդիր չէ, այլ վերի գտած թուականի նշանակած նշանութեամբը կը հասուատուի թէ Աղեքըսանդր Բազմավէպ՝ Մովսէս Մարգարէն առաջ ապրած չէ, և ոչ ժամանակակից է անոր, այլ ընդ հակառակն, հազար հինգհարիւր տարիներ վերջը աշխարհի վրայ երկցեր է:

Այս Աղեքըսանդր Բազմավէպն իրը մատենագիր գրած է Աղելելեան ազգաց պատմութիւն մը, և ուստիմասիրութիւն մը Հոքէից ազգին վրայ՝ որոնցմէ հատակուորներ միայն մնացեր են: Ումանց այս Աղեքըսանդր Բազմավէպն՝ մեծին Աղեքըսանդրի ժամանակակից կարծեցին, սակայն ոչ եթէ Բազմավէպն ինքն է Մներին Աղեքըսանդրի ժամանակակից, այլ Աղեքըսանդր Բազմավէպին յիշատակած անձնաւորութիւնը՝ որ է ներոսոսն: Եւ արդարեկ Եւսերիոս՝ Բազմավէպ Աղեքըսանդրի խօսքերը այսպէս կը յիշատակէ. «Զայս Բերոսս յառաջնում մատենի պատմեաց»։ (տես Եւսերիոս Քրոնիկոն էջ 6): Ուրեմն Բազմավէպ Աղեքըսանդր Բազմավէպի գրոց հաւաքածուէն է որ կը յիշատակէ հին ազգաց պատմութիւնը, մանաւանդ Բարելացւոցը:

Մ'վ էր այս ներոսոսն:

թոյներն (ինչպէս և Եւակրիսսի Քրոնի-կոնի Բոյն բնագրին մէջ կը գտնենք) թերոսոս (Եղբածծ) կը գրեն. իսկ խորենացին թերիոս ըստ հին սպազմութեան Խորենացւոյն (տպեալ ի Վեճնաթիկ 1762). իսկ նոր սպազմութիւնը թիւռու և Ջաղղիերէն թարգմանութիւնները Երօսու մ. այն Langlois իւր թարգմանութեան մէջ «Երօս»ի բով փակագիծ բացած է և այս փակագին մէջ (Piontros) թիւռոսի տաճկահայ հնչուուր զրած է, արդեօք «Երօս»ն պարսից հնչած Պերոզն չէ: Թէ և թերոսոս Քաղէէացից պատմարան մէկը և Քաղէէացւոց պատմութիւնը զրած է. Դարու, նաև քան զՔրիստոնէական թուականն կ'ապէր և կը համարուի ժամանակակից մեծին Աղեքսանդրի. և որովհետ Յոյն լեզուով զրած է իւր պատմութիւնը, անունն ևս ըստ Յոյնաց գրուած է: Միթէ Քաղէէացիք Պերոզ չէին կոչեր զինը թիւնց լեզուաւ:

Բայց ի՞նչ որ ալ ըլլայ անոնը, իւր զրութիւնը յանական լեզուով զրած է, և է իւր ազգին ամրողջական պատմութիւն մը՝ Գաւերական յիշատակարաններու վրայ հաստատուած, ամենահին ժամանակինք սկսեալ. բայց այսօրուան օրս իւր զրութիւնն կորսուած է և միայն հասուածներ կը գտնուին Յովսեպոսի հնախօսութեան մէջ: Ծանօթ է նաև թիւռոս անուամբ աստեղագէտ մը զոր ոմանք պատմարանին հետ կը նոյնացնեն, որն որ հնարած է նոր արեւային աստիճան մը կամ արեւային ժամացոյց:

Թերոսոսի աստիճանի նորութիւնը կ'երկի թէ Աթենացւոց մեծ զարմանց պատճառած է, վասն զի թերոսոս կամ թիւռոս օտարազգի մը ըլլալով բոլորովին նոր զիւտ մը կը ներկայացնէր թիւնց: թիւռոսի ժամանակին վրայ ոչ ոք կը տարակուաթ, այսինքն, նաև է չըրբորդ զար-

րոն, ն. ֆ., անձնաւորութիւն մը և հետևարար նա չկրնար ըլլալ ոչ Մովկէս մարզպարէէն առաջ, և ոչ անոր ժամանակակից, այլ ինչպէս ժամանակազրական թուականէն կը տեսնուի, թիւռոս Մովկէսին շատ գարեր վերջն է:

Որբան որ թիւռոս կամ թերոսոս իւր պատմութիւնը յիշատակարաններէ առած է, սակայն Ապողոդորոսէ ևս բաղած րաներ մ'ունի. (տես Եւսերիոս Քրոնիկոն էջ 6): թերոսոս Ապովկէս կը գրէ. «Եւ սկսանի գրել զայս ձև օրինակի, Ապողոդորոս առէ՛ Նախ թագաւոր կացեալ Աղորոս շարս տասն. որ լինին ամք (36000) երեսուն և վեց հազարը: իսկ Խորինացին Արիւ զենոսս վկայութիւն կը բերէ. «յետ որրյ, ասէ, թագաւորեալ Աղորոս շարս տասն, որ լինին ամք երեսուն և վեց հազարը»:

Ո՞վ են այս անձնաւորութիւնն. - յայտնի է թէ Ապողոդորոս նախ է քան զիերոսոս որ անոր հեղինակութիւնը յարգելով գրուածին վրայ կը հրմանի:

Կան զանազան Ապողոդորոսներ, որոց հնագոյնը կը յիշատակուի 408ին ն. ֆ. իսկ այլք թերոսոսն վերջը եղած են, որոց վրայ խօսին հարկ չեմ դատեր. ուստի հինգերորդ դարու սկիզբն ապօռոյ այս Ապողոդորոսն Յոյն էր ազգաւ և մանաւանդ Աթենացի, իրը պատկերահան նախանձորդ եղաւ Զեբսիոսի և հալածեց զանիկայ:

Իւր զրած պատմութիւնն չգտնուիր և ոչ մի հատուած առանձին, և թերեւ ոչ ոք պիտի գիտնար թէ Ապողոդորոս պատմութիւն Բարեկացւոց զրած ըլլայ, եթէ յիշատակած ըլլալ թերոսոսն:

Իսկ Աթիւնու Պտղոմէոս Սոսերի ժամանակակից, Ասորեստանեայց և Բարեկացւոց պատմութիւն մը զրած է՝ որուն հատակուառները կը գտնուին Եւսերիոսի, Ա. կիւրզի, Խորինացւոյն, Գէորգ Սիւնկելլոսի զործերուն մէջ, և այս հատակուառ-

1. Թուի թէ անոր Հաբարած տարրեր է Աթագու աստիճանն (ժամացոյցն) որ հաւանական է Դամասկոսին քերած էր, երբ ընդ առաջ գնաց Թագութիւնապարայ Ասորեստանեայց Թագաւորին, տեսաւ հոն սեղան զուից

ները հաւաքեր է Արալիզեր առանձին հատորի մը մէջ, բայ ի խորենացւոյն մէջ գտնուածներէն։ Արդ ինչպէս Արիւղենու, նոյնական և Ապողողորոսն ոչ միայն Մովսէսի մարգարէէն առաջ չեն, այլ և ոչ իսկ ժամանակակից, հապա շատ ու շատ դարեր վերջ, այսինքն, Արիւղենուն տասնուիրեց դար և Ապողողորոսն տասն ու մէկ դար վերջ եղած են։

Արդ նկատի առնելով որ Քաղղէացւոց պատմութիւն գրող այս ժամանակիրներն՝ Մովսէսի ժամանակէն շատ աւելի վերջ են, ընականարար քննադատութիւնը կը ստիպէ ուրիշ հարցում մ'ալ ընել, այն է. Մովսէս Մարգարէէն ժամանակ այս հին ազգերն (Խօսըր Բարելացւոց, Ասորեստանեայց վրայ է), ունէին թէ ոչ այն պարձենկոտութիւնը համարելու իրենց ազգին ծագումը բիւրաւոր տարիներ առաջ։ Եզիպտացիք հրաժարեցան առաջին ազգ ըլլալէն, քննութեամբ մը՝ որ նոր ծնած մանկան վրայ փորձեցին. թող որ Պղատոնի գրոց մէջ յիշատակուած եզիպտացին իսկ զլուխ կը ծուէ Բարելացւոց բիւրաւոր տարիներու առջև։

Արդ եթէ Մովսէսի ժամանակ այդ ազգերն, այնպիսի զրոյցներ ունէին, ինչո՞ւ Մովսէս իւր ժամանակազրութեան մէջ առաջին մարդոյն ծագումը անոնց ժամանակազրութենէ առաջ չդրաւ, գէթ կընար ժամանակակից զնել, Պիտի առարկուի թէ Մովսէս Բարելացւոց վրայ ծանօթութիւն չունէր. բայց Մովսէսի համար կ'ըսէ Ս. Գիրը. «Եւ վարժեցաւ Մովսէս ամենայն իմաստութեամբ Եզիպտացւոց» (Գործք Առաք. է. 22)։

Արդ «ամենայն իմաստութեամբ» իմաստին դէմ ոչ մի առարկութիւն կը զօրէ. եթէ ժամանակակից ազգաց զրոյցներն չզիտնար ամենայն իմաստութիւն չէր ունենար, մանաւանդ թէ Մովսէս Քաղ-

դէացւոց վրայ աւելի ծանօթութիւն ունենալ կը պահանջուէր, վասն զի իր ազգը անկից սերած էր, կ'ըսէ Ս. Գիրը Արքահամար. «Ել դու յերկրէ ցումմէ և յազգէ ցումմէ» (Ծննդ. ԺԲ. 1)։

Եւ ո՞րն է այս երկիրն։ Առանի համար կ'ըսէ Գիրը Ծննդոց (զլ. ԺԱ. 28). «Եւ մեռուա Առան (Խորալըն Արքահամար) առաջի թարայի հօր իւրոյ, յերկիրն յորում ծնաւ, յաշխարհին Քաղղէացւոց»։ Եւ Արքահամար համար կ'ըսէ. «Եւ եհան զնսսա յաշխարհին Քաղղէացւոց»։ Իսկ Բարելացից և Ասորեստանեայց Սեմայ ցեղէն ըլլալնին Սեմայ որդիքներէն յայտնի է (Ծննդ. զլ. Ժ. 22). «Որդիք Սեմայ՝ Ելամ, և Ասուր, Արքացասադ և Լուր և Արամ»։ Արդ Ասուրէն սերեցան Ասորեստանեայց և Եւամին որդիքներէն Քաղղէացից<sup>1</sup>։ Փանի որ Արքահամ Քաղղէացւոց երկրէն կ'ելլէ և «յազգէ քումմէ» բացատրութիւնը կայ Ս. Գրոց մէջ, ինչ է այս «յազգէ քումմէ»ի բացատրութիւնն. զիտենց որ ըստ Ս. Գրոց Արքահամ կը սերի Սեմ-Արքացասադ և ... Թարայէ, ըսել է թէ Արքահամ Քաղղէացւոց ազգին հետ ազգակցութիւն ունի, և այս՝ մօրենական ճիւղով կարելի է։ Արդ Մովսէս, որ Արքահամով հնագերորդ կը համարուի, իւր ազգին ծագման վրայ եղած զրոյցներն պիտի չզիտնար. Պարձեալ Մովսէս լսեր էր թերեւս Եզիպտացւոց ըրած փորձն, որոնք կը պրատէին գտնել ծագումն առաջին մարդոյ, նա ցոյց տուաւ Ծննդոց զրոյովը թէ մարդիկ ուսկի՛ց սերած են, հակառակ ամենայն առասպելաց. եթէ կային յիրափ Մովսէսի ժամանակ այն առասպելեալ բիւրաւոր տարիներն՝ նա իւր ժամանակապրութիւնը կը յօրինէր այն թուականաց համաձայն, ըսել է թէ այն բիւրաւոր տարիներու առասպելն զոյութիւն չունէր Մովսէսի ժամանակ։ Եւ ինչո՞ւ թէ-

1. Ըստ Սամուէլ Երեսու Անեւույ. «Եւ Արքացասադ և ամանէ Քաղղէացից»։ Մնաց որ Եւեմացիքն դրած իրանական կորոն։ Արքացասադ, այն պատճառաւ

րոսոս Ապողողորոսի վրայ կը հիմնուի և ոչ իւր ազգին յիշատակարաններու վրայ. միթէ թերոսոսի ժամանակ չկային այն բարելական յիշատակարաններն. և ինչ չափ ժամանակի միջոց մ'է ընդ մէջ թերոսոսի և Ապողողորոսի, եթէ ոչ զար մը կամ լաւ ևս նուազ քան զդար:

Դիտենք թէ մեծին Աղեքսանդրի ժամանակ՝ կանգուն յիշատակարաններ ևս կային, վասն զի նա 325ին բարելոն մըտաւ, և յայտնեց թէ յիտ աւարտման արշաւանաց, փափաք, ունէր կանգնելու բարելոնն և նորոգել յիշատակարանները, ուրեմն Աղեքսանդրի ժամանակ բնաչինջ եղած չէին, այլ յիտ մահուան Աղեքսանդրի իւր ծրագիրը ոչնչացաւ, և ապա արագարարը բարելոն կատարեալ կործանման ենթակութեցաւ. որով յայտնապէս կրնանց ըսել թէ թիւրոսոսի ժամանակ, որ Աղեքսանդրի ժամանակակից է, տակաւին կանգուն կային բարելական արձանագրութիւններու, ուստի թիւրոսոսի՝ Ապողողորոսի վրայ հիմուուիլ՝ կը նշանակի թէ իրեն ժամանակ իսկ չկային այնպիսի բացատրութիւնը որ բիւրառոր տարիներ նշանակեն, ապա թէ ոչ փոխանակ Ապողողորոսէ վկայութիւն բերելու կրնար ըսել՝ ինչպէս կը կարդացուի արձանագրութեանց մէջ, ի որովհետեւ Ապողողորոսէ կը բերէ վկայութիւնը, պիտի ըսենք թէ նա այն պատճառու Աղեքսանդրի մը վկայութիւնը կը բերէ որպէս զի ընդունելի ընէ իւր ազգին ամենանութիւնը: Բայց կարելի է նաև որ նոյն ժամանակ տարի բարին իմաստը ոչ արևային տարի կը հասկնային՝ այլ պարզ շրջան մը. վասն զի ճիշ Մովսեսի ժամանակ իսկ արեային տարին բաղկացած էր 360 օրերէ որ իւր տեղը ցոյց պիտի տանք:

Եւ նոյն իսկ Սոլոմոն իմաստոյն ժամանակ չկար թիւրառոր տարիներու գոյութիւնը, վասն զի խօսելով Աղամայ վրայ. «Նա զնախաստեղին՝ զհայրն աշխարհի զմիայն հաստատեալ պահեաց» (իմաստութիւն Սոլոմոնի զլ. ժ. 1), Արդ Հայր աշխարհի կամ նախաստեղի չէր անուանէր Սոլոմոն, եթէ անկէ առաջ

գտնուէին այլ մարդիկ, այլ սերունդներ. ուստի ամենայն եղրակացութեամբ կը հաստատուի թէ այս բիւրառոր տարիներու առասպելը (1000) հազար տարի առաջ քան զթուականն Քրիստոնէութեան զոյութիւն չունէր և կամ եթէ գոյութիւն ունէր, Սոլոմոն և իր ժամանակակիցները ժամանակի շրջան մը կը հասկընային զայն և ոչ թէ 354, 360 կամ 365 օսբերէ բաղկացած տարի մը<sup>1</sup>:

Լուսնական շրջան կամ Եգիպտացւոց տարին

Այս վերոյիշեալ ծանօթութիւնները տաւէ վերջը, կրնանց ուղղակի Եւսերիոսի ցոյց տուած ճամրուն մէջ մտնել: Ի՞նչ կ'ընէ նա՝ խօսելով Եգիպտացւոց զից, դիւցանց և Ըլրուականաց թագաւորութիւններուն վրայ, որոց տեսութիւնը 24900 տարիներու շրջան մ'է, և այս տարիները, Կ'ըսէ, լուսնական են, այն է մի ամբողջ լուսնոյ շրջան մը՝ որով 24 հազար և այլն տարիներն արևային 2000 տարիներու զրեթէ կը համապատասխանէին: Խսկ Եւսերիոս Մանեթոնին զաղափարն է որ մեզի կ'արտայայտէ: Ո՞վ էր այս Մանեթոնն և ո՛ր ժամանակի կը պատկանի:

Մանեթոն (ման-թոթ կը նշանակէ րորառու, թոթ չաստուածոյն նուիրեալ) Եգիպտացի քուրմ մ' էր Աղեքսնիւտեան ծագմամբ, Գ. զարու Ն. Թ. Ք. Քրութեան պաշտօն կը կատարէր ի Ճեկուպոլիս երկու Լազեններու՝ այսինքն, երկու տառչին Գտղումնաց ժամանակ: Իրենց համար յօրինեց Եգիպտացւոց պատմութիւն մը յոյն լեզուաւ Գ. զարու մէջ, սկսեալ տաճարաց ամենահին ժամանակներէ մինչ չե մեծին Աղեքսանդրի ժամանակ: Ունինք նաև ասոր հատակուոր հատուած-

1. Ես տուակ՝ երբ դիտենք որ իմաստութեան զերս Սոլոմոնն գոյութ չէ, այլ Պաղոմէն Դ. Փիլոպատրի ժամանակ (222-205 Քրիստոնէ առաջ):

ներ յիշատակուած Յովսեպոսի, Եւսե-  
րիոսի, և Սիւնկելիի գրուածոց մէջ. իւր  
Եզիպտացւոց երեսուն հարստութեանց  
թագաւորաց ցանկերը, Մենասէն մին-  
չև Նեկտոներ թ., իրբեք ժամանակագրու-  
թիւն լաւագոյններէն կը համարուին:

Կան նաև, Մանեթոնի անուան տակ,  
աստեղարաշխական բանաստեղծութիւնը  
վեց երգով, բայց այս գրութիւնները կը  
համարուին գրուած յետ Քրիստոսի Գ.  
դարուն:

Արդ ի՞նչ կ'ըսէ Մանեթոն. «Յետ որոց  
ըստ պայազատութեան ենաս թագաւորու-  
թիւն մինչև ցիւղիս ամս բիւր և յերիս  
թիս և յինն հարիւր, (13900), ըստ լուս-  
նական տարեաց, զերեսնօրեայ թուոց ա-  
սեմ. բանզի զայժմու մի ամիսն յայն-  
ժամ նորա տարի կոչէին»:

Դարձեալ նոյն հեղինակն կը կրկնէր.  
«Յետ դից... ազգ դիւցազանց... և ապա  
ուրուականաց . . . ի միասին ամենայն  
լինին ամբ բիւրս և հազար (11000),  
որ և այս իսկ լուսնական են այսինքն  
ամսաւորք». և որպէս զի ցոյց տայ թէ  
նոյն լուսնական տարիով ժամանակա-  
գրուած են նոյն ժամանակի ամրող տա-  
րիներն, կ'ըսէ. «Համարեալ լինի ի միա-  
սին ամենայն զոր Եզիպտացիքն պատմն  
լինել դիցն և դիւցազանց և ուրուականացն  
ամս լուսնականս երկու բիւրս չորս հա-  
զար և ջ (24900), որ լինի արեգական  
ամբ ԱՄՋ»:

Հաւանական է որ Մանեթոնի այս գա-  
ղափարն աւելի ստոյգ ըլլայ, բանի որ  
նա Եզիպտացի բուրմ մ'էր և ծանօթ մե-  
հենադրոշմի լեզուն, ուսկից բաղած է  
ժամանակի բաժանումները և իւր ազգին  
ժամանակագրութիւնը. Եւ որովհետեւ նա  
Պտղումնանց ժամանակ կ'ապէէր, և ըստ  
հրամանի թագաւորին կը կազմուէր Աղեք-  
սանդրեան գրատունն, ծանօթացած պիտի  
ըլլայ Արիւղենոսի հետ որն որ կը գրէր  
Քաղցէացւոց պատմութիւնը: Մանեթոն  
տեսնելով Աբիւղենոսի քառասուն երեք  
բիւր տարիներու շրջանը կամ 120 շա-  
րերու շրջանը, որպէս զի իրենը և Աբիւ-

դենոսի նշանակած տարիներն իրարու  
հետ չշփոթին, իր ազգին մէկ տարւոյն  
լուսնական տարի ըլլալը յայտնապէս շեշ-  
տած է:

Արդ քանի որ Եւսերիոս Մանեթոնի  
բացարութիւնը մէջ տեղ կը բերէ, ըսել  
է թէ անոր կարծիքին հաւան կը գտնուի,  
ապա թէ ոչ պէտք էր հակառակիլ և չըն-  
դունելու բացարութիւն մը տալ, և չըն-  
դունելու պատճառ մ'ալ չկայ. ըսել է թէ  
տարի ըսելով կ'ըմբռնէ որ և է շրջան մը  
կամ բոլորում մը, ասով ընդունած է թէ  
Եզիպտացւոց տարին է բոլորում մը լուս-  
նական երեսուն օրերէ բաղկացած. բայց  
ով զմեզ կը ստիպէ ընդունիլ թէ Բարե-  
լացւոց բոլորում մը բաղկացած ըլլայ  
365 օրերէ, կամ Եզիպտացւոց պէս լուս-  
նական եղած ըլլայ. ասոր համար հարկ  
է այս խնդրոյն վրայ բննութիւն ընել:

Համաձայնութիւն Եզիպտացւոց լուսնական  
տարիներուն Արեւային տարւոյն հետ

Վերը լիշտակեցինք թէ Եզիպտացւոց  
24900 լուսնական տարիները ըստ Մա-  
նեթոնի կը համապատասխանէին 2206  
արեգակնային տարիներու, նոյն կարծի-  
քին է նաև Եւսերիոս. տեսնենք նախ թէ  
այս համեմատութիւնը ճիշտ է թէ ոչ:  
Հիներն լուսնական ամսոյն մի կատարեալ  
բոլորումը կը հաշուէին նոր լուսոյ ե-  
րեւումէն մինչև յաջորդ նոր ծննդոյ երե-  
սումն, և կը համբէին 30 օր: Բայց ապա  
լուսնական ամիս գործածող ազգերն ուղղ-  
եցին այս վրիպակն և դրին 29, 5 օր,  
մինչ ներկայ աստեղագիտական հաշուով կը  
գտնենք որ մի պարբերական (synodique)  
ամիսն հաւասար է 29, 5 305881 օրերու.  
Բողովկ աստեղարաշխական մանր հաշի-  
ներն՝ որոնց յինքեան անհրաժեշտ են ի կր  
առնուլ, մենք 29, 5 օր պիտի հաշուենք  
լուսնական ամիսն և տարին 365, 25:  
Արդ 24900 լուսնական տարին 30ական  
օրէն կ'ըսեն 747000 օրեր, որ եթէ  
365, 25 արեգական տարւոյն օրերովը  
բաժնենք՝ կ'ունենանք 2045 արևային տա-

բիներ, իսկ թէ, ինչպէս ըսինք, լուսնական տարին կամ լուսնական ամիս գործածող ներուն համաձայն 29,5 օր հաշուենց, 24900 տարիներն պիտի ընեն 734550 օր, որ կը համապատասխանէ զբթէ 2011 արեգակնային տարիներու, իւրաքանչիւրը 365,25 օրէն. իսկ աստեղաբաշխական հաշուվ վերոյիշեալ երկու թիւր չորս հազար ինն հարիւր լուսնական տարիներն շուրջ 2013 տարիներու կը համապատասխաննեն : Բայց Մանեթոն կամ Եւսերի ինչպէս ՍՍԴ այն է 2206 տարի գտներ են, զարմանց է, վասն զի առաջին հաշուվ 2045 տարի կ'ընէ իսկ երկրորդ հաշուվ 2011 կամ 2013, իսկ ին ժամանակ ընական է այնքան մանր աստեղաբաշխական հաշիւներու տեղեակ չէին, որով ըստ իրենց հաշույն պէտք է 2045 տարի ըլլայ և ոչ 2206:

Բայց այս վերջին թիւր գտնելու համար մի միայն ենթադրութիւն՝ կրնանք ընել, այն է արեւային տարին այն ժամանակ 360 օր էր, և որովհետև Եւսերիսուի թրոնիկոնը մէջ՝ Մանեթոնի վկայութեամբ՝ լուսնական տարին 30 օրէ բաղացաց էր, որով 24900 լուսնական տարին, ինչպէս կանխաւ նշանակեցինք, 747000 օր կ'ընէր, բամենելով ընդ ՀՅ 60՝ նոյն ժամանակի համարուած արեւային տարւոյն հետ, կ'ունենանք ցանորդ մը 2075 համարեալ արեւային տարի. ուրեմն այս վերջին ենթադրութեամբ իսկ ՍՍԴ թիւն չունեցանք :

1. Կը նշանակեմ թէ որքան մեր թարգմանիչները սրբազնէ են Աթուլաղայի ձննդան թուականը, բայց մի էական էք մը կաքճն տարակաւական թողեր են. այս է, եթէ Պատմեայ ձնուցը զննեց Մաթուլաղայի 187 տարւոյն, Աթուլաղայ այլ ևս 969 տարի սրբած չումար՝ այլ 989 տարի. բայց կը կարգանց Ս. Գրոց մէջ, միւս եկեղեց Մաթուլաղայ յետ հնանելոյ նորա զի՞ւամէց ամս ութ Եւրիւր երկու», ուստի 802ի վրայ աւելցնելով 187 տարի ալ Պատմեանը 989 տարի, որ կաքճն վրիպակ մը կ'երկու բան զի Ս. Գրոց մէջ յայնան կ'ըսէ. «Եւս եկեն ամենայն տարւը Մաթուլաղայի զրուեկաց ամբ ինն հարեւան վախտոն և ինն, և մեռաւ». ուստի 20 տարւոյ վրիպակ մը մէջ տեղ կը տեսներ:

Մակայն յայտնի վրիպակ մ'է և կուղեմ համազուիլ թէ այս վրիպակս պէտք չէ հեղինակին վերագրել, ըլլայ ևս առաւել Եւսերի, սա որ այնքան մանր հաշիւներ կը պրատէր, այսպիսի սիալ մը պէտք չէր ընել, արդեօք թարգմանչին վրիպակն էր, քանի որ կորսուած է բնագիրն, թէ ընչօրինակողին համարելու է այս վրիպակն, պատափանը թէ դրական և թէ բացասական կրնայ ըլլալ, ես մեր թարգմանիչը կրնամայուած արդարացնել որ մեր թարգմանիչները խիզ չեն ըրած եօթանասնից մէջ եղած վրիպակն սրբագրել, և փոխանակ 167 տարուան եղած ժամանակ Մաթուլաղայ ծնաւ զի՞ամէց զնելով՝ դրած են 187 ըստ Երրայականի, տեսնելով թէ Ո. Գրոց հոգւոյն հակառակ էր, վասն զի (ի Ծննդ. է 21), կ'ըսէ. «Եւ մեռաւ ամենայն մարմին շարժուն ի վերայ երկրի, թըոչնոց... և ամենայն մարդ» :

Եթէ Մաթուլաղայ ապրած ըլլար. «Ամենայն մարդ» չէր զներ, և աւելի որոշ քիչ վերջը կ'ըսէ. «Եւ մնաց միայն նոյ և որ ընդ նմա էին ի տապանի անդ» . որով եթէ 167 թիւը դրած ըլլային՝ Մաթուլաղայ տակաւին 14 տարի յետ ըրհեկեղի ապրած պիտի ըլլար, ուրեմն այս յայտնի վրիպակն տեսնելով մեր թարգմանիչները, ըստ Երրայականի՝ եօթանասնից 167 տարին ըրին 187՝ տարի, ես առաւել խիզ չպիտի ընէին Եւսերի թարգմանութեան մէջ վրիպակ մը սրբագրելով. ուստի

Եթէ մեր թարգմանչն է այս վրիպակն. կը գտնենց Աթուլաղայի Երրական Եկեղեց Ս. Գրոց թարգմանութեանց մէջ, որ ամենց ալ փոխանակ 802 զնելու կը զնեն 782 և այս ըստ Երրայականի է որ Եւսերի թրոնիկոնը մէջ ալ Հրէց թուականի համար 782 կը զնէ, մինչ Եօթանասնից 802 կը զնէ, բայց այլ օրինակներ կ'ըսէ Եւսերին Եօթանասնից համար՝ թէ 782 դրած նն. որով 782 + 187 = 969 նշնչէք 187 + 802 = 969. Երկու կերպով ալ Մաթուլաղայի 969 տարի հրամակ կը տա զայ, բայց երկուցէն ո՞րն ժամարելու է, Նթէ վերջինը ընդունից, Մաթուլաղայ յետ ըրհեկեղի տակաւին 14 տարի ևս ապրած կ'ըլլայ, որ Ս. Գրոց հակառակ է. «Եւ նշնէաց զամենայն հասակ որ էր ի վերայ

հաւանական է թէ հայ թարգմանութեան ընդօրինակողին պիտի ըլլայ այս վրիպակն, վասն զի փոխան ՀՅ կարդալու ՄԶ կարդացած ու գրած ըլլայ: Դիտենց թէ հին երկաթագրոց մէջ շատ կը պատահի մագաղաթի պակասութեան պատճառաւ առնել օտար լեզուաւ գրուած մագաղաթն ու քերել զայն լրացնելու համար իրենց գրութիւնը, եթէ քերթելու ժամանակ մասցած ըլլայ նշան մը, մի փոքրիկ ձև մը, միանալով նոր գրուածին հետ, զարմանց չըլլար եթէ ուրիշ մօտաւոր գրի ձև մը առաջ զայ, որով կրնանց մեծագոյն հաւանականութեամբ հետևնել թէ Եւսերի Հայ թարգմանութեան ընդօրինակողը անշուշտ «ՀՅ ը ՄԶ կարդացած ըլլայ: Բայց կարելի է ևս ենթաղրել՝ որ Եւսերի Թոյն ձեռագրի մէջ կամ Մանեթոնի բնագրին մէջ կերպարանափոխուած ըլլայ, վասն զի եթէ ենթաղրենց թէ Թոյնն զրած ըլլայ օև և ընդօրինակողն կարդացած ըլլայ օև որ շատ աւելի հաւանական է, հայ թարգմանիչը օչ թարգմանած է ՄԶ որ պիտի ըլլար օև == ՀՅ: Ուստի ի՞նչ որ ալ ըլլայ վրիպակ մ'է որ պէտք է ուղղել, որովհետեւ քաննըզորս հազար ինն հարիւր լուսնական տարիներ երեսնական օրէն, և արևային՝ նոյն ժամանակի տարին հաշուելով 360 օրէն՝ պիտի համապատասխանեն ՄՀՅ այն է 2075 նոյն

ժամանակի արևային ըսուած տարիներու որ ըստ ասաեղաբարաշխական հաշույն 2013 արեաղաբարձյին տարի կ'ընեն:

Բարելացւոց տարին կամ «շարք»ի շրջան

Յետ խորհրդածելու Եզիդատացւոց երկու թիւր չորս հազար ինն հարիւր տարիներու վրայ որ կը համապատասխանէին աստեղաբաշխական 2013 տարիներու, տեսնենց հիմա թէ կարելի չէ նոյն ոճով արեգակնային տարիներու վերածել նաև Բարելացւոց քառասունէն աւելի թիւր ըսուած տարիներն:

Այս անդրազարձութիւնը միայն Մովսէսի խորենացւոյն մէջ կը նշմարենց, վասն զի Բարելացւոց Աղորոս թագաւորին վրայ խօսելէն վերջը՝ որ (36000) երեսուն և վեց հազար տարիի թագաւորած է կ'ըսէ ըստ Արիւգենեայ կամ այլ մատենագրաց, այդ տարիներու վրայ հետևեալ Խորհրդածութիւնը կ'ընէ. «Որ ոչ միայն ըստ բոլորման առ ի յարեգակնէ չորեց ժամանակեան ըստ մեզ լինելոյ տարւոյն, հեռանայ յամաց մերայնոցն, մանաւանդ թէ յաստուածայնոցն, այլ և ոչ որպէս Եզիդատացիքն զլունական հաշուեն ծագմուն, նա և ոչ՝ զառ ի դիցն ոմանս ասացեալս, եթէ տարիս որ գարեցի զուշեալ համեմատին թոյն՝ թուոց առարկու-

երեսաց երկրի, ի մարդոց մինչև յանասուն... և մաց Նոյ և որ ընդ նմա էին ի ասպանի անց (Ծննդ. Է 20), Արդէն նշանակուած է թէ տապանին մէջ որո՞նց ժաման. և Պետրոս Առաքել յասաշն Բզմոյն (Գ. գլ. 20) կ'ըսէ. «յառ նաւազնեւ, այս ինքն ոգիք երեւ ութ ապրեան ի չըրոյն»: Եւ այս ութ անմիտն են Նոյ և իր կինը, և երեք որդիք և անոնց կիններ ուստի այս կերպով մեացան 969ը = 167 + 802 ընդունելի պէտք է որ ըլլայ. որով առաջին կերպը այն է 782 + 187, ընդունելու աւելի հաւանական կը թուի: Բայց Ա. Գրոց մէջ նշանակեց մ' իսկ զոր տեղ դրուած էն, եթէ մեր մացին համաձայն չի զար, չնեն կրնար ըսել թէ վրիպակ է, պէտք է երեսուն աւ ճեղ ըլլան, միայն համաձայնն, ցնելու կըտած է գտնել, կանանք արդէն նշանակեր իւ այս գրուածուն մէջ (Գ. Գ. Թ. Բաման 1894 էլ 270), հոս անցողաբար բացատրեմ. Զանապանութիւն որ կայ Հրէից և Խօթանանց մէջ այս է, մին կը խօսի անդրանկան

ննդեան թուականին վրայ, իսկ միւսը՝ այն անժին վրայ որոյ վրայ է խօսեց, երբ մին ըսէ թէ Ղամէք Մաթուազայի 167 տարւոյն ծնաւ, ոչ թէ Ղամէքն հասկը նալու է այլ անցրանկան ծննդոցը. իսկ երբ միւսը ըսէ թէ 187 տարւոյն ծնաւ, հասկընալուն է ճշեց Ղամէքի ճնանդն Ուրով մեր թարգմանէիները այս խորհրդածութեամբ Ղամէքայ ծննդոցը 187ին դրած են, որպէս զի Մաթուազայի մաւզ Հրէկեղէքն առաջ պատահէ. իսկ 802 տարի ապրեցաւ դրած են՝ անդրանկան ծննդենէն համերեւով:

1. Հին տպագրիք Վենետիկոյ 1752ին կը գննի Յոյն, 1827ին անուսէ, 1841ին նուսէ, Ստեֆանէ Խորէն Վ., 1889ին Խորենացւոյն թարգմանութեան մէջ կը գնէ հուշ. Լանջուան և Ֆլորիփաւ Գայ. թարգմանութեանց մէջ հուս համարակար թարգմանած են. ըստ իս «Յոյն բուոց»ն երբ Հոյումի տուամբ աւելի հաւանական թուի, և որոյ իմաստ մը կ'արտայայտէ:

թեանց առ ի հաւաստել ճշմարտութեանն, երեմն նուազ՝ և երբեմն սաստիկ հաւացումն գումարելով։

Այս հատուածին խրթնութիւնը այնքան է որ ոչ մի թարգմանչ խորենացւոյ կրցաւ որոշ իմաստը պարզել, և այս խրթնութեան մասին խորէն Մ. Վ. Ստեփանէ հետեւելլ կը զրէ իւր խորենացւոյն աշխարհարար թարգմանութեանը, աւելի հաւանական երեցաւ մեզ քան թէ միւս բոլոր թարգմանութիւնները։ (ծանօթ. 21 էջ 20): Մթութեան պատճառաւ ըսել է թէ ոչ մի հայկարան որոշ կրցեր է պարզել իմաստը, պատճառն այն է՝ քառական իմաստին հետեւած են և կը հետևին, և ուրիշ պատճառ մ'ալ խրթնութեան այն է որ խորենացին նոր տեսութիւն մը կը յայտնէ Բարեկացւոց տարիներու վրայ, հասկցեր է նա թէ Բարեկացւոց տարիները՝ ոչ արեային տարւոյն և ոչ էզդապատցւոց լուսնական տարիներու կը նմանէին։ բայց թէ ի՞նչպէս եղած են և ի՞նչ բաժանումն ունին չէր կրցեր զաղափարել, որով և տարտամ թողած է բացատրութիւնը, եթէ բառական թարգմանութեան չհետեւելով՝ իմաստին ուշ զննենց, զաղանեաց մի մասն պարզուած կը զբոննենց, և այս մեծ քայլ մ'առած կը նկատուի։

Ահա թէ ի՞նչ է խորենացւոյն այս հատուածին իմաստը փակագիր մէջ զրուածները իմաստը պարզելու համար են կամ լրացուցիչ համարելու հն իմաստին։

(Բարեկացւոց տարիները) ոչ թէ մեր տարիներու արեգական բոլորման համեմատ չորս եղանականերէ բաղկացած են, այլ կը հեռանան մերինէն (քաղաքական

տարիներէն), և նոյն իսկ աստուածայիններէն (կրօնական տարիներէն), սական և ոչ իսկ էզդապատցւոց պէս նոր լուսնով (ծնունդէ ծնունդ) կը հաշուեն։ և ոչ (իսկ կը հաջուեն շարժմամբ) մի քանի չառտուած (մոլորակ) ըստածներու (համեմատ): Արդ եթէ մէկը ուզենայ առաջարկել համեմատել Յոյն թուոց հետ (Հոյոմի տումարի հետ) ճշմարտութիւնը ստուգելու համար, (պիտի տեսնէ) որ (մի քանի ստուգներու հաշուով) երրեմն պական և երրեմն աւելի տարիներ պիտի գտնուին։

Ռատի խորենացւոյն այս հատուածով կը հասկընանը թէ Բարեկացւոց տարիներու բոլորումը ոչ լուսնական է և ոչ արեգակնային, այլ պէտք է ըլլայ աստեղային, բայց ո՞ր աստեղ վրայ է ինդիրը չէր կրցեր զաղափարել, եթէ մոլորակաց ոմանց պարբերական շարժմամբը հաշուենց նուազ տարի կ'ունենանց, իսկ եթէ ուրիշներուն համեմատ՝ շատ տարի կ'ունենանց որ Ա. Գրոց ժամանակազրութենէն աւելի պիտի ելլէ. այսպէս նոյն ժամանակ ամենաերկար շրջան ընող մոլորակն էր Երևակն։ որ ԶԳ 5 տարի կը զնէր մի ամրող բոլորում մը ընելու համար, որով 432000 ընդ 29, ծ կու տայ արդինց մը 14644 տարիներու որ Ա. Գրոց ժամանակազրութեան արեային տարիներէն աւելի է: իսկ թէ նոյն մոլորակին մէկ տարրուան մէջ պարունակած օրենովը բաժնենց, արդինը

1. Դիբ՝ որ են չաստուածներ՝ մոլորակներ են, վասն զի բոլոր նոյն ժամանակի ժանաօթ մոլորակներ՝ զի՞ս անուամբ կը յորոշէին, այսպէս Փայտածուն Եղիշ չերպէս կը կոչէ։ Արուսեակն՝ ծանօթ Աստղին է։ Հրատն Արէսն է, Լուսթագն՝ Արամագն է։ Երեսն մահա-

կու տայ պակաս քան զքառասուն, այս ալ նուազ թիւ մ'է: Խորենացին ուրեմն հասկցցեր էր թէ Բարելացւոց թիւրաւոր տարի ըսուածները չէին համապատասխաներ մեր տարիի շրջանին, այլ անոնք կը չափէին ժամանակը աստեղ մը շրջանով՝ ոչ լուսնով և ոչ մոլորակով (և ոչ զառ ի դիցն), բայց թէ ո՞ր աստղն էր չէր կրցեր գտնել: Մընց նորա զաղափարն շարունակենք:

Եթե միջանկեալ խորհրդածութեանց, Բարելացւոց թիւրաւոր տարիներու խրն-դրոյն մէջ մոնենց ուղղակի:

Նախ Եւսերիոսի մէջ կը կարդանց. «Եւ ծի (հարիւր քսան) շարս ասեն առնել Սիօն թիւր ամաց. եթէ շարն Գ հազար և կեց հարիւր ամ նշանակիցէ»:

Հոյ Սիօն թիւր ամաց զրութիւնը ի՞նչ-պէս պէտք է հասկնալ, եթէ զրուածքին նայինց կը կարդացուի երկու հազար քառասուն երեք թիւր տարի, և որովհետեւ թիւր մը տասն հազար է, ուստի վերոյիշեալ թիւր կը վերածուի (20430000) քսան միլիոն չորս հարիւր երեսուն հազար տարիներու, որ Եւսերիսի բացարութեանը չի համապատասխաներ, վասն զի նա կ'ըսէ եթէ մէկ շարը (3600) երեք հազար վեր հարիւր տարի նշանակէ, ըսել է թէ 120 շարը պիտի համապատասխանէ ( $120 \times 3600 = 432000$ ) չորս հարիւր երեսուն երկու հազար տարիներու. արդ եթէ խորհրդածներ Սիօն թիւր թուոց զրութեան վրայ որ 120 շարերու արդինց կը համարուի՝ Սիօն թիւր ամն պիտի կարդացուի ըստ օրինի ԽԿ թիւր և Ս տարի, և արդարեւ այս պէտք է ըլլայ, վասն զի հայերէն լեզուի մէջ, ինչպէս նաև Յոյն լեզուի մէջ ալ գործածական է, փոքրազոյն թիւր մնծագունէն առաջ ըսել ու գրելը շատ սովարական է, այսպէս կ'ըսնենց ութ և տասն, այս ոճով Ս որ է երկու հազար՝ փոքր է քան թիւրը, առաջ դրուած է, ասոր համար հարկ է գրութեան ձեւը փոխելով կարդալ որպէս զի իմաստէն չի հեռանանք. եթէ քառասուն և երեք թիւր տա-

րիներն արեային տարի համարէինց, արդէն շատ են ծանօթ ժամանակազրութեան համար, ո՞ւր կը մնայ ցան միլիոն տարիներն, որ 10 թագաւորի ժամանակ կը նշանակուի միայն, և այս թուոյս վրայ Եւսերիոսի լատին թարգմանութեան ծանօթութեան մէջ այսպէս կը խորհրդածէ. «Եթէ մէկ կամ երկու անգամ պատահէր 2043 թիւր առասպելեալ հաշիւը կարելի էր ըսել թէ այն վրիպակ է զրչագրաց, և կարդալու էր ԽԿ (43) թիւր, ինչպէս զայն կը հաստատեն ասս անդ յիշատակուած գումարներն»: (Եւսերիոս քրոնիկ. էջ 8. ծանօթ. 12): Ասով Աւգերեան վ. և կը համարի թէ 2043 թիւր տարի է Սիօն թիւն և այնպէս ալ թարգմանած է, բայց վերը ցոյց տուինց թէ ոչ թէ 2043000 տարի այլ 432000 է:

Եթե պարզելու թէ Սիօն թիւր տարիները կը նշանակեն 432000 թիւր մը՝ կը հարցուի թէ այս թիւն ի՞նչ հասկնալու է: Արդեօց ամ որ զրուած է հայերէնի մէջ երր արեգակնային տարի է, թէ «ամ»ն առնուած է իրը որոշեալ շրջան մը, ստոյգ ժամանակն չափելու համար: Այս շրջանը գտնելու համար ակնարկ մը տանց Խորենացւոյն Դ Գլուխին, ուր Ս. Գրոց ժամանակազրութիւնը՝ Բարելացւոց հետ համաձայնեցնելու փորձ մը կ'ընէ. «Նոյն գունակ և զիթի նահապետաց տասն Քարտութեալ հանդերձ թուին»: Եւ Գլ. Զ.ի մէջ. «Խակ թուով նահապետաց և ի ջրհեղեղին յիշատակաւ զոյց հաւասար Մովկսիի»: Դարձեալ. «Որպէս յաղազս նախատելին, ոչ առաջին մարդ ասելով զնա, այլ թագաւոր»:

Խորենացւոյն այս վկայութիւններէն կը տեսնուի թէ նա համոզուած է բոլորովին որ Բարելացւոց թագաւորներն նախաջրբհեղեղեան նահապետներ են Աղամէն մինչև ցնոյ, որոնց Աղորոսէն Քարտութերու տասն թագաւոր կը հաշուեն:

Բայց Աղամէն նոյ երկու զանազան ճիւղաւորութիւն կայ. առաջին՝ Աղամ Սեթ և այլն. երկրորդ Աղամ կայէն և այլն. և երկու կարգ նահապետութեանց անուն-

Ներ կան Ա. Գրոց մէջ, որոնք կը տարբերին թարելացւոց տասն թագաւորաց անուններէն, և ինչպէս Խորենացին կ'ըսէ. «որպէս յաղագ նախաստեղծն ոչ առաջին մարդ ասելով զնա, այլ թագաւոր. սոյնպէս անուն խժական նմա աննշանակ կոչելով»:

Ուստի կը հետեւ, և աւելի հաւանական է, թէ Աղամ. կայէն և սերունդներն թարելացւոց թագաւորներու համապատասխան են. այսպէս ըստ Արիտենեայ Հովիւ և առաջնորդ համարելով զլեշամ՝ կայէն Աղորոսի կը համապատասխանէ իր առաջին թագաւոր, որով ըստ Ա. Գրոց

Երկրորդն է՝ ինուգե և թարելացւոց	Ապարասոս
Գայեթեպատ	Աղմեղոն
Չորրորդն՝	Ամենովն
Հինգերորդն՝	Ամբուազայ

(Այս Մաթուսաղայ կայենեան է, մինչ Սեթեան Մաթուսաղայն թարեթի որդի է որ և 969 տարի ապրեցաւ).

Աշենորոդն՝ Ղամէր, թարելացւոց դաւանու

(Եղյնպէս այս Ղամէր կայենեան է և ոչ Սեթեան, վասն զի Սեթեան Ղամէրի տղան է Նոյ, մինչ կայենեան Ղամէր երկու կին առաւ իւր կնութեան, ինչպէս որ մասնաւոր կը շեշտէ Ա. Գրոց).

Եօթներորդն է Ցովել թարելացւոց Եղովանոսու Ա. Թերորդն՝ եղուայ Ցով-

բաւէլ՝ Ցովապ

» Ամենփոխոս

Ինսերորդն՝ Թուվել Կորըն » Ութարտէս

(Թուվել Ղամէրայ երկրորդ կնկանէն էր և ունեցաւ թուվել ըսոյր մը՝ նոյեմա. Թերմա կին Նոյի՝ վասն զի ըստ Սամուէլ երիցու՝ Նոյեմզար Կանուանի Նոյի կինը):

Ուստի կրնանց ըսել ամենայն հաւանականութեամբ թէ Աղամայ սերունդները կը միանային ի Նոյ՝ որուն թարելացից Քսիսութերու նաւապեա անոն կու տային՝ ասոր համար Ուլուպիողորու, զոր Խորենացին կը յիշատակէ, կ'ըսէ թէ իւր նաւը Հայաստան ուղղած էր. «Յետ նաւելոյ Քսիսութերեայ ի հայս» (Խոր. Գլ. Զ), որով Քսիսութերու կը նոյնանայ նոյր հետ. ասով Նոյ տասներորդ նահապեան է ըստ

Ա. Գրոց, իսկ Քսիսութերու տասներորդ թագաւոր թարելացւոց. Մէկ խօսքով տասն շարք թարելացւոց թագաւորներն, չէին այլ ինչ եթէ ոչ նախաջրհեղինեան տասն Նահապետներ՝ կամ կայէնի սերունդներէն մէկն սկսեալ մինչև ց'ոյ, և կամ աւելի հաւանական է, ինչպէս վերը յիշատակեցի՝ նոյն իսկ կայինէն սկսեալ մինչև ց'ոյ:

Այդ Քաղղէացւոց տասն թագաւորներուն գահակալութեանց շրջանն ըլլալով 432000 ամ ըստ իրենց հաշւոյն, կամ 120 շար, ըսել է թէ պիտի համապատասխանէ կայինէն մինչև ցմահ նոյի, որ որոշեալ շրջան մ'է Մովսիսեան տարիներու մէջ, միայն այս տեսակէտով որ՝ Մովսիսեան մէն մի տարի՝ կամ 360 օրերէ և կամ 354 օրերէ բաղկացած է. ուստի Քաղղէացւոց 432000 «ամ» երն ոչ թէ արևային տարի կը նշանակեն այլ շրջան մը. և արդէն ամ բառը է թարգմանութիւն էտօս յունական բառին, որ թէ տարի և թէ շրջան կը նշանակէ:

Անգամ մը որ որոշեցին թէ Քաղղէացւոց «ամ» երն շրջան կը նշանակեն, կը հարցուի թէ ինչ շրջան է այս, և արեային բանի՞ տարիներու կը համապատասխանէ: Այս հարցմանց պատասխանը տալէն առաջ՝ նախ Մովսիսեան տարին սահմաննեց, քանի որ անոր վրայ պիտի հիմունինց Քաղղէացւոց շրջանը գտնելու համար, և ապա անցնինց անոնց շրջանին վրայ խօսելու:

Մի բանի անգամեկը շնչտեցի թէ նախաջրհեղինեան տարիներուն իւրաքանչիւրը, կամ Մովսիսեան մէն մի տարին, կը բարկանար 360 կամ 354 օրերէ: պիտի հարցուի թէ ինչ հիման վրայ հաստատուած այսպիսի ձեռնարկ մը կ'ընեմ: Թէպէս և Ա. Գրոց ոչ մի տեղ որոշ նշանակուած չկայ թէ տարին 360 կամ 354 կամ 355 օրերէ բաղկացած է, այլ տարին նկատուած է միշտ իւր շրջան մը 360 օրերէ բաղկացած, նոյնպէս թէպէս Ա. Գրոց տարին (կամ լաւ ևս Հնգամատեանի մէջ զործածուած տարին) և ոչ մի ժա-

մանակագիրը մինչև հիմա նկատած են թէ բարձրացած ըլլայ 360 կամ 354 օրերէ, այնու հանդերձ ինձ այսպէս ստոյդ կ'երիփ. և որպէս զի ձրի խօսք մը մէջ տեղ նետած չնկատուիմ՝ նոր բան մ'ըսելու մարմաջով, անոր համար Ս. Գրոց վկայութեանց վրայ հիմնուած պիտի ջանամ հաստատել թէ Մովսիսեան տարին 360 կամ 354 օր է և ոչ արեային տարի 365 կամ 365,25 օրերէ բաղկացած։

Ս. Գրոց մէջ կը յիշատակուի տարի բառը, նոյնպէս ամիսն, և տեղ տեղ ալ օրուան թիւը, բայց ոչ մի տեղ յիշատակուած է որոշակի թէ տարին 360 կամ 354 օր ըլլայ, նոյնպէս ամիսներուն օրերուն նկատմամբ չկայ յիշատակութիւն թէ 30 ըլլան, կամ աւելի և կամ պակաս, բայց կրնանց խորհրդածութեամբ մը հետեւցնել թէ ամիսն քանի օրերէ բաղկացած էր։

Նախաջրեղեղեան տարիները յիշատակուած են Մովսեսի Հնգամատենի Ծննդոց գրոց մէջ, և տարւոյն բաժանումը որոշ կերպով կը տեսնուի ջրհեղեղի պատմութեանը մէջ, ուր տասն և երկու ամիս ըլլալը՝ և ամիսներն ՅՈ)ական օր ըլլալը խորհրդածութեամբ կրնանց գտնել, արդ եթէ հաստատենց թէ ամէն ամիս երեսնական օր է, ինքնին կը հետևի թէ տարին ալ 360 օր է, ինչպէս հին ժամանակ Եզիպատացիք բանած էին. իսկ թէ ենթազրենց թէ լուսնական տարին է որ կը գործածէր Մովսէս, պէտք է որ ընդունինց թէ լուսնական տարին 354 օրէ բարվացած է. վասն զի ջրհեղեղի պատմութեան մէջ յիշատակուած ամիսներու համապատասխանող օրերուն թիւերէն երկու տեսակ տարին ալ կը հասկըցուի, այս է պատճառն որ Մովսիսեան տարին դրած եմ թէ՝ 360 և թէ 354 օր։

Ի՞նչպէս կը հասկըցուի թէ Կախաջրինեղեւ լըսն ամիսներուն օրերն երեսնական են

Նախ ջրհեղեղի դէպքը մի ամրողջ տարի տեսած ըլլալը հետեւեալ վկայութեան

վրայ կը հաստատուի. վասն զի ջրհեղեղին կը սկսի երկրորդ ամսոյն 27ին, և յաջորդ տարւոյն երկրորդ ամսոյն 27ին կը վերջանայ. «Եւ եղեւ յետ եօթն աւուր, և ջոր ջրհեղեղի եղեւ ի վերայ երկրի յամին զից հարիւրորդի կենաց նոյի յերկրորդում աւսեան ի բան և յիօրն աւտոյն» (Ծնդ. Է 10). արդ այս վկայութիւնը կը ցուցնէ ջրհեղեղին սկսելու ժամանակը, որ է նոյ նահապեաին 600 օրդ տարւոյն երկրորդ ամսոյն 27ին, իսկ վերջանաւուն համար կը զրէ Մովսէս, թէ նոյի 601 երկրորդ տարւոյն՝ երկրորդ ամսոյն 27ին տեղի ունեցաւ. «Եւ եղեւ ի վից հարիւրորդի և միում ամի կենաց նոյի յամսեան առաջնում... նուազեաց ջուրն յերեսաց երկրի... իսկ յամսեան երկրորդի որ քան և եօրն եր աւտոյն ցամացեցաւ երկրի, եւ խոսեցաւ Ցէր Աստուած ընդ նոյի և ասէ. եւ ի տապանէ այտի» (Ծնդ. Է 13-16): Ուստի յայտնի կերպով նշանակած է Մովսէս թէ տարի մը ամքողջ եղած է ջրհեղեղի շրջանը, և ասոր վրայ ոչ ոք կը տարակուաի: Ասկայն տարակուսական կէտն հոս է, զիտնալ թէ տարին ցանի՞ օրերէ բաղկացած էր Մովսէս մարգարէին ժամանակ, ասոր համար երկու կարծիք յայտնեցինը, առաջինը ըսինը թէ տարին 360 օրերէ բաղկացած կրնայ ըլլալ, իսկ երկրորդը՝ 354 օրերէ. և արդարէ Ս. Գրոց խօսքերուն վրայ հիմնուած հաստատենց նախ առաջին կարծիքը: Երբ Մովսէս կը խօսի ջուրերուն բարձրանաւուն վրայ կ'ըսէ. «Եւ բարձրացաւ ջուրն ի վերայ երկրի աւուրս հարիւր և յիսուն» (Ծնդ. Է 24):

Արդ բանի՞ ամիս կ'ըննեն 150 օրերն, եթէ միայն այս բացատրութիւնն ըլլար գոււար կ'ըլլար գուշակել, բայց արդէն Մովսէս պարզ և որոշ ըսած է. և զարմանալի է թէ ինչո՞ւ ցարդ ոչ ոք անդրագարծութիւն ըրած էր այս կէտիս վրայ, վասն զի ինչպէս որ որոշ ըսած էր ջուրերուն բարձրանալուն համար, նոյնպէս ալ որոշ կերպով կ'ըսէ ջուրերուն ցածնալուն մասին. «Եւ նստաւ տապանն

եօթներորդում ամսեան ի քան և եօթն ամսոյն ի լերինս Արարագյա»։ (Ծնդ. լ. 4)։ Միթէ ասկէց աւելի բացայայտ բան կը նար գրել նախ զրած էր թէ երկրորդ ամսոյն 27ին ջրճեղեղն սկսաւ, և հիմա ալ կ'ըսէ եօթներորդ ամսոյն 27ին Արարակ լերան վրայ նստաւ տապանն. ուրեմն ջրոց բարձրանալը ասով հինգ ամիս տեւած չըլլար. և որովհետև Մովսէս այս հինգ ամսոց համար իրը ժամանակամիջոց 150 օր պատճ էր, ուստի հինգ ամիս կը համապատասխանէ 150 օրերուն, որով գտնելու համար թէ մէկ ամսուան մէջ քանի օր կը գտնուի, պէտք է 150օր բաժնել ընդ 5, որով կ'ունենանց քանորդ մը 30, որ է մեր փիստառած մէկ ամսուան մէջ գտնուած օրերուն թիւը, ուստի 12 ամիսներն երեսնական օրով կ'ընեն 360 օր, որ է Մովսէսին բաղարական տարին։

Երկրորդ կարծիք, այսինքն, թէ տարին 364 օրէ բաղկացած կրնայ ըլլալ ըստ Ս. Գրոց

Այս կարծիքն ալ կարելի է հաստատել ջրճեղեղի պատմութեան վերջին ամիսներուն թիւերովը. վասն զի Մովսէս յետ խօսելու մետասաներորդ ամսոյն վրայ, առանց յիշատակութիւն ընկելու երկոտասաներորդ ամսոյն, միջնակեալ թիւեր կը շարէ՝ որոնց գումարը 54 օր է. (այսինքն, երկու ամսոց միջոցը՝ մետասաներորդի և երկոտասաներորդի)։ և որովհետև նախընթաց տասն ամիսներն երեսնական օրեր դնելով 300 օրերն կը լրացնեն, — վերը յիշատակած մեր պատճառարանութեան համաձայն, — ուստի այս 300 օրերուն վրայ աւելցնելով ծ4 օրերն ալ՝ կ'ունենանց Յօնական լուսնական տարի կամ Մովսէսին կրօնական տարի, և կրնանց զայս հաստատել վկայութեամբ Ս. Գրոց։ «Իսկ յամսեան մետասաներորդի որ օր առաջին էր ամսոյն երկեցաւ զլուխ լերաց, իւ եղեւ յետ քաստուն առար երաց նոյ զպատու. հան տապանին զոր արար. և արձակեաց զագուաւ... և արձակեաց զաղաւին զնես

նորա՛...: իւ զաղարեաց ևս առորս եօթն գարձեալ արձակեաց զաղաւին...: իւ զաղարեաց առորս եօթն ևս և գարձեալ արձակեաց զաղաւին...: իւ եղեւ ի վեցհարիւրդի և ի փում ամի կենաց նոյի յամսեան առաջնում որ օր մի էր ամսոյն...»։ (Ծնդ. լ. 5-13)։

Այս պարբերութենէն այս կրնանց հետեւնել որ տասնումէկերորդ և տասներկրորդ ամիսներուն գումարը 54 օր կ'ընեն, վասն զի ասհմանց որոշ դրած է. մետասաներորդ ամսոյն մէկէն մինչև յաջորդ տարույն առաջին ամսոյն մէկը եղած օրերուն թիւերն հետևեալներն են, այսինքն, լերանց գլուխները երեսնալէն մինչև նոյայ տապանին պատուանը բանալը 40 օր եղած է. այն ժամանակն է որ ազաւը կ'արձեկէ, և անոր ետեէն աղանին, որ չգոտնելով ոտից կոռուան տապան դարձաւ. ասով նոյ իմացաւ թէ ջուրերը տակաւին բաշուած չէին և երկիրը ցամքած չէր, այն պատճառաւ 7 օր ևս սպասեց 40 օրերէն վերջը, որով 47 օր եղաւ. գարձեալ ուրիշ եօթն օր ալ սպասեց՝ նորէն աղանին արձեկեց, և աղանին չզանար այլ ևս, ասով 54 օր լրացած ժամանակ՝ առաջին ամսոյն առաջին օրուան կը հասնի. արդ եթէ տասն ամսոց երեսնական օրերուն վրայ աւելցնենց երկու ամսոց 54 թիւն ալ՝ կ'ունենանց ճիշտ Յօնա օր՝ որ է լուսնական տարի կամ Մովսէսիական կրօնական տարի։

Եւ արդարե իսրայելացից պէտք էին ունենալ կրօնական տարի մ'ալ որպէս զի միւս ազգերէ տարբերէին. վասն զի կ'ստական զրոց (ԺԲ. 2 համարի) մէջ կ'ըսէ. «Ես եմ Տէր Աստուած ձեր. ըստ ամենայն զնացից երկրին Եզիպտացւոց յորում պանկխուցարուց՝ մի առնիցէք, և ըստ զնացից երկրին Քանանացւոց յոր ես տարայց զնեզ՝ մի առնիցէք և ըստ օրինաց նոցա մի զնայցէք»։

Արդ անոնց օրինաց պէս չընելու համար (միթէ կրօնական օրինաց վրայ չէ՞ր) ահա թէ ինչ կը կարդանց Արագու համար. «Քանզի արար զգոշեալս, և կոոց

նոցա զոհէր յերկրին թենոմայ, և անցուցանէր զորդիս իւր ընդ հուր ըստ զարշութեան ազգացն զորս սատակեաց Տէր» (Բ. Մն. իլ. 2):

Ահա ասոնք էին որոց համար կ'ըսէր. բայտ օրինաց նոցա մի զնայցէք. և որպէս զի կարենայ զիրենք ազատել, նոր օրէնքներ տոււա անոնց. և որպէս զի տօներնին չխանակին՝ հարկ էր որ տումարնին ալ տարբեր ըլլար, այն է տարբեր ժամանակ տօնէին իրենց տօները. ուստի յայտնապէս կ'ըսէ. «Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց և առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ» (Ելք. ԺԲ. 2), իրը իրենց փրկութեան օրը, և ո՞րն էր այս ամիսն. «Չի յայսմ աւուր եւանէր ի յամսեան կանիոց». ուրեմն կանիոց ամիսն էր սկիզբն տարւոյ:

Ամիսն կանիոց մեր թարգմանիշներն դրած են Երրայական Ապիակ և Ցունական և լին տա նέան յամսեան նորոյ. Լատինա mense novarum frugum այն է յամսեան նոր պտղոց. Գաղղիականն առ ամս que les épis murissent. Սպանիականն el mes de las neuvias mieses = յամսեանն նոր գնձոց. իսկ Անգլիականն, Գերմանականն, Խոտալականն՝ Երրացեցւոց պէս դրած են Ապիակ: Արդ Ապիակ ամիսն ներկայիս կը հանդիպի 15/28 Մարտի որ արդի Հըէից Դարնանամուռ կը նշանակէ. որով այս ամիսն կը սկսի իսրայելացւոց կրոնական ամիսն:

Անգամ մը որ գտանք թէ Մովկւսեան կրօնական տարին 354 օր է, փորձենք ասով թէ կարելի՞ է գտնել Քաղղէացւոց «շար»ի տարիներու շրջանը:

Գիտենց թէ Նոյ Նահապետ ըստ Ա. Գրոց 350 տարի ապրած է ջրհեղեղէն վերջը. իսկ Քաղղէացւոց Քիսիսութրու թագաւորը 18 շար, ուստի 18 շար շրջանին մէջ այնցան օր պէտք է ըլլայ որբան օրեր կան Մովկւսեան 350 տարիներուն մէջ, այն է 350 անգամ 354 որ համապատասխանն 123900 օրերու, արդ արևային տարւոյն վերածելու համար պէտք է բաժնել այս թիւս ընդ 365,25, որ կ'եւէ 339,22, և որովհետև Քիսիսութրու

18 կամ  $18 \frac{1}{3}$ , շար թագաւորած է, բաժնելով 339,22 ընդ 18,5 կու տայ մեզի արտադրեալ մը 18, ո. 33:

Արդ ի՞նչ է այս 18 տարի և 33 հարկորդով. աստղաբաշխութեան մէջ կայ ծանօթ խաւարմանց շրջան մը Քաղղէացւոցէ առ մեզ եկած, որ շարուսի շրջան կը կոչուի, յորում ամէն 18 տարի և 10 օրուան մէջ արևային և լուսնային խաւարումներն գրեթէ նոյն շարբով կը կըրկնուին աշխարհիս վրայ, միայն այս տարբերութեամբ որ նոյն խաւարումներն աշխարհիս տարբեր լայնութեան և երկայնութեան տակ կը կատարուին. արդ եթէ խորհրդածնեց 18,33 թուոյն վրայ պիտի տեսնենք թէ 18 տարին կը համապատասխանէ 18 տարիներու խաւարմանց որ թուով 70 են, և 33 հարիւրորդն 10 օրուան:

Արդ մէկ շարը 18,33 տարի կամ լաւ ևս  $18 \frac{1}{3}$ , ըլլալով՝ 120 շարերն պիտի համապատասխանն 2200 տարիներու, վասն զի  $18 \frac{1}{3} \times 120 = 2200$ : Եւ ի՞նչ կը նշանակեն այս 2200 տարիներն, եթէ ոչ կայէնի թագաւորութենէն մինչև ցմահ նոյի կամ ըստ Քաղղէացւոց՝ Աղուուսէն մինչև Քիսիսութրու: Գիտենց թէ ըստ Եօթանասնից թարգմանութեան Աղամէն մինչև ջրհեղեղ են 2262 Մովկւսեան տարիներ, որոց վրայ աւելցնելով 350 տարիներն, մինչև ցմահ նոյի, կ'ընեն 2612 լուսնական տարիներ, բայց եթէ ուզենանց այս լուսնական տարիները վերածել արևային տարիներու պէտք է (բազմապատկել 2612 ընդ 354) և բաժնել ընդ 365,25 և պիտի գտնենց 2531 տարի. բայց որովհետև թարելացւոց թագաւորներու շրջանն կը կազմէ 2200 տարի, եթէ զայս հանենց 2531էն տարրերութիւնը կ'ունենանց 331 տարի. որ կը նշանակէ թէ Աղուու թագաւորած է 331 տարի՝ Աղամայ դրախտէն արտաքսմանէն վերջը: Եւ կարծես նոյնը կը բացատրէ նաև Ա. Գիրք երր կ'ըսէ կայէնի համար. «Եմուտ կային առ կին իւր և յղացաւ և ծնաւ զենովց, և շինէր ցաղաց, և զնէր

անուն քաղաքին յանուն որդոյն իւրոյ  
հնովքայ»:

Քաղաք շինել երկրի վրայ իշխանութիւն ունենալ ըստ է, ուստի հաւանական կրնանց համարել թէ Քաղէցացից այս նոր իշխանութիւն գիտագրին փոխանակ կային անոնք տալու, Աղորոս անոնք գործած ըլլան. ինչպէս և Խորենացին իւր պատմութեանը մէջ զայս կը շեշտէ երբ կ'ըսէ. «Որպէս յաղագն նախասուեծին ոչ առաջին մարդ ասելով զնա այլ թագաւոր. սոյնպէս անուն խժական նմա և աննշանակ կոչելով» (Խորենաց. Գլ. Զ):

Ի՞նչ շրջան է ուրեմն Սիդ. բիւր «ամ»ն

Այս գլխոյս մէջ բացատրեցի թէ ի՞նչ է «շար»ի շրջանն և թէ Սիդ բիւր ըստած ամի է թիւ մը որ 432000 կը նշանակէ, և ոչ ինչպէս կարծեցին ումանց թէ ըլլայ (20430000) բան միվոն չորս հարիւր երեսուն հազար թիւ մը. և թէ Խորենացին բիւրաւոր տարիներու վրայ խօսած ժամանակ՝ աստեղային կամ մուլորակային տարի կը հասկնար, և մենք ըսինց թէ այս զաղափարն պէտք է պարզել. ուրեմն ի՞նչ է այս 432000 թիւն:

Այս խնդիրս լուծելու համար հարկ է աստեղարաշխական հաշիւներու մէջ մըտնել, որպէս զի ճիշդ միկնութիւնը տանց. և աստեղարաշխական հաշով լուծելու պատճառն այն է որ՝ արդէն Քաղէցացից այս գիտութեան մէջ շատ վարժ էին և իրենց գիտութիւնը ուրիշներուն չհաղորդելուն պատճառաւ, իրենց գնանալովը կրոսուցաւ նաև իրենց գիտութիւնը. նոյնպէս եղաւ նաև Եղիպատացոցը՝ որոնց քով քուրմերու մէջ մասց գիտութիւնը և չանցաւ ժողովրդեան շրջանակի մէջ, կային մոզեր Պարսից մէջ, ինչպէս կային Քաղէցայց բարեկացոց և Ասորեստայնեայց մէջ. Միթէ չկային և Հայոց մէջ այս ճիւղին հետևողներ. ի հարկէ կային. մանաւանդ թէ Զողիակոսի գտիշները, բատվկայութեան Շուետացի աստեղագիտի մը

որ 18որդ դարու վերջերը կ'ապրէր, Հայերը եղած են: Մը են Հայոց աստեղարաշխական և կրօնական կամ այլ գիտական գիրքերն, յայտնի գիտենք թէ հրոյ ճարակ եղան ձեռամբ Ս. Լուսաւորչի, Մերուժանայ, և զանազան անգամներ՝ օտար ազգաց արշաւանց ժամանակ, քար ու քանդ աւերակաց տակ թաղուած ու փացաց են: Միթէ այս օրինակ եղած չեն նաև Քաղէցացոցը ու Ասորեստանայցը, մինչև որ վերջի ժամանակները կինուէի աւերակաց տակէն գտնուեցան թրծուն աղիւներու վրայ գրութիւնը ու ըսով նոյն ժամանակի պատմութիւններ երկան ելան: Միթէ չեն կրնար հետեցնել թէ հիներուն գիտութիւնը տակաւին թէ մասսակի կու զայ երբ կարդանը թէ Եղիպատացիները գիտէին երկրաշարժներու օրէնքերը, մինչ հիմա ամենանուըր գործիքներով իսկ չենք կրնար գոշակել ժամ մ'առաջ, ի՞նչ կ'ըսեմ, նոյն իսկ քառորդ ժամ մ'առաջ երկրաշարժ ըլլալը. և սակայն իրենց ունեն այս գիտութիւնը: Այսպէս երբ ըսենց թէ Քաղէցացից զարգացած էին աստեղագիտութեան մէջ, բայց է թէ ունէին ի՞նչ ի՞նչ առաւելութիւններ այս մասին մէջ՝ որով միւս ազգերն կը գերազանցէին. և յայտնի իսկ Եներկի իրենց ծանօթութիւնը ժամանակի բաժանմանց մէջ, վասն զի ուզեր են ժամանակի շափը հաստատուն հիման վրայ զնել, որուն շրջան կամ ամ անուն տուած են. և այս շրջաններէն մին էր նաև գարնան գիշերահաւասարէ մինչև աշնան գիշերահաւասարի ժամանակամիջոցն՝ զոր իրը հաստատուն ժամանակ համարած էին. Թէպէտև որցան իրենց հաստատուն համարած էին՝ սա ալ հնթակայ էր փոփոխանց: Եւ այս փոփոխութեան պատճառն էր կանխում գիշերահաւասարից, տեղափոխութիւն արտակեղորնութեան և ան-

ջատման գծին շարժման, որոնք պատճառ կ'ըլլան եղանակաց տեղութեանց մէջ եղած տարրերութեանց կիսազնտի մի և նոյն կողման համար:

Ներկայ ժամանակի եղանակաց տեղութեանցն, և աստեղարաշխական հայեւներով, կրնանք հետևեցնել թէ մի և նոյն կիսազնտի վրայ գտնուող վայրի մը՝ հին ժամանակի եղանակաց տեղութեանը որչափ էր. վասն զի ներկային ամառուան և զարնան եղանակաց օրերու թիւը կը հասնի  $185 \frac{1}{2}$ , և որովհետեւ հիմա երթարով կը նուազի գրէթէի  $50^{\circ}, 1$  չափով, ըսել է թէ  $70$  դար առաջ  $189 \frac{1}{2}$ , էր սոյն եղանակաց օրերուն թիւը:

Աղդ իր շրջան մ' առնելով Քաղդէացւոց ժամանակի զարնան զիշերահաւասար եղած օրերուն թիւը, այսինքն,  $189 \frac{1}{2}$ , ու կրկնելով զայն տասն և ինն անգամ պիտի տեսնենք թէ  $3600$  թիւն պիտի լրացնէ ( $189 \frac{1}{2} \times 19 = 3600$ ), որուն շար անունը տուած են թարելացիները, ինչպէս վերագոյն տեսանց որ այս մէկ շարը կը նոյնանար խաւարմանց շրջանին հետ, որ է  $18 \frac{1}{2}$ , տարի. Աղդ յետ գտնելու թէ մէկ շարը կը համապատասխանէ  $3600$  օրերու՝ բազմապատկելով  $120$  շարերով պիտի ունենանց ինզրեալ Սիֆրիւր ամ, որ է  $432000$  օր. ( $189 \frac{1}{2} \times 19) \times 120 = 432000$ :

Ասով ատուգեցինք թէ Քաղդէացւոց թագաւորաց ժամանակը ոչ եթէ ըստ ումանց կարծեաց բիւրաւոր տարիներ առաջ ծագումն առած է, այլ մեր ժամանակագրութեան շարքին մէջ խոնարհարար կը մտնէ. Մէկ խօսքով կրնանք ըսել թէ մեր Ս. Գրոց Նախամարդէն՝ Ազամէն առաջ, ոչ մէկ այլ մարդու գոյութիւն եղած է:

Հ. ԽՈՐԷՆ Ս.

## ՅԱՏՈՒԿ ՈՃ

ՈՒՂՂԱՓԱՋԻ ԿՐՅՈՆՔԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ

Գործեական բերադրուրիւնենք կրօնուայցներն, Փր. Սիփիրակոյի՝ Բրակայի հաերային կիմնագիոնի կրօնագիտուրեան ուսուցչապետի



Չէի գուշակեր որ արձակուրդի ազատ ժամերը օգտակար անցընելու նպատակով ընթերցմնն համար հարազատի մը փոխ տրուած հատորիկը խնծի պիտի վերադառնար, յիշատակի օր մը, ամբողջապէս հայացած, ի նշան գնահատման. Եւ հիմակ անմկից դիպուածով ընտրուած յօդուած մը (Գլ. Գ. Տ 32) ընթերցողներուն ներկայացնելուն մէջ միակ դիտումն ունիմ յայտնել չնորմակալութիւնս անոր թարգմանչին: Աւելորդ պիտի ջրայ համառօտ մը ծանօթացնել գիրքը իր Յառաջարանէն:

\*  
\* \*

Ներկայ գրքիս մէջ կրօնական ուսուցման համար ալ օգտակար կ'ըլլովն Նորմանկալարժութեան առողջ սկզբունքները, որոնց միջոցաւ դաստիարակութեան ասպարէզին մէջ վերջին ատեններս մեծ արդիւնքներ եւ յառաջադիմութիւններ ծեռք բերուեցան:

Գլխաւորսպակս նպատակս եղաւ գործնական թելադրութիւններ ընծեռել: Գգուշացայ պարզ նրբաւութիւններէ որոնցմով ոչ ոք կիմաստանայ: Ովկ որ գրքէս գլուխ մը կարդայ, ըսածս շուտով պիտի հասկնայ:

Այսօր արդէն Յատուկ ոճս շատ մը աստուածաբանական ու նաև ուսուցչական (magistrali) հաստատութիւններու մէջ մուտք գտած է: Բնականապէս ուսուցչութեան թելիսածուներու հրահանգման համար, կը թողովին այն մասերը որ արդէն ծանօթ են իրենց՝ վարդապետական արուեստէն եւ ընդհանուր մանկակարժութենէն:

Գիրքս ինչպէս նաեւ իր անգղիերէն թարգ-